

This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + Refrain from automated querying Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/



ORIENTAL INSTITUTE LIBRARY



OXFORD UNIVERSITY

FOL. 694.45 ALI

62/-42





Digitized by Google

18 Sisano,

ՍԻՍԱԿԱՆ

ՍԻՍԱԿԱՆ

ecció (Majorse

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ሀኑኑኄቴԱՑ ԱՇԽԱՐՀԻ

→•j•i•**→**

Մ․ ՄԽԻԹԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ Ի ՄԽԻԹԱՐԱՑ ՎԱՆՍ․ Ի Ս․ ՂԱԶԱՐ 1893



1 4 MAR 1968

BUBULUBUB



խարճս [Մեծաց եւ ֆոքուն Հայոց, վաղ ուրեմն՝ երեսուն եւ աւելի ամօք յառաջ՝ արարեալ իսկ էի չափաւոր իմն քանակաւ, զերեք մասն (ի չորից), ըստ այնը ժամանակի գիտուԹեանս եւ կամաց․ յետ որոյ աճելով աճեցին ծանօԹուԹիւնք աշխարհագիտականք՝ տեղագրուԹեամբ, պատ կերագրութեաւմբ, ճնաքննութեամբ, եւ սցըն․ յորմէ յայտ է՝ զի առ չափով նորոց գրելոցս (Սի֊ սուանալ, |Լլրարատալ եւ ||իսականի) համառօտք եւ նուազունք էին նախագրեալքն, միահամուռ իրրեւ զմի եւ կէս հատորոցս այսոցիկ․ եւ ի դէպ էր ըստ իւրաքանչիւր արժանեաց՝ աճեցու ցանել զնոսին, եԹԷ կամք էին ի չափ երեցունցս հասուցանել, զոմանս Թերեւս յողջոյն հատոր մի, զայլս երկուս երկուս կամ երիս՝ ամփոփելով ի միում․ զի ոչ ամենայն աշխարհք Հայոց ընդար <u>ձակը եւ ծանօթը են ի պատմութեան՝ որպէս սոքա, կամ Գուգարք, Տուրուբերան եւ վասպու,</u> րական, այլ գոն եւ անձուկք եւ սակաւածանօԹք կամ՝ ոչ ուսյարունք, որպէս, ֆայտակարանն եւ եւ Մոկք․ Թող եւ զաշխարհս ֆոքուն Հայոց, որք Թէպէտ եւ յոյժ հետաքննականք իցեն՝ այլ խառն՝ եւ ուրեք առաւելեալ օտարազգի բնակուԹեամբ, եւ յորս չէր իմ ձեռն արկեալ, բայց միայն յեւ այն, Թերակատար գոլ եւ ոչ անԹերի․ եւ եԹԷ գայցէ ինչ նոցա ի պէտս եւ ԹԷ ոչ՝ լիցի ըստ կամս նոցա, ոչ եւս է ինձ փոյԹ։

իսկ Նորընծայս այս ՍիՍԱԿԱՆ կամ ՏեղագրուԹիւն ՍիԷՆԵԱՑ ԱՇԽԱՐՀի, մի ի *բաջանչանիցն* ի ճնգետասան ճին աշխարճս մեր, (որպէս յուսամ ճաւաստել ստորագրուԹեամբս), բովանդակեալ ատոր տղտ։ ՝ առտճ, սոմսենտ։ բու Դուբնու նվբևչ ատաժեսութբարը՝ ժիաբնեօծ ըսնսն զարտահանկո գրութեանց եւ պատկերագրութեանց՝ որ ի ձեռն ազգայնոց եւ որ օտարաց․ ի յետնոցս յայսցանէ՝ ճնոց եւ նորոց՝ քաղեալ է իմ ինչ ինչ, այլ ոչ բազում ինչ. վասն որոյ եւ ոչ կարգեցի ցանկ հե. ղինակաց՝ որպէս **յ**լլյրարատն, ուր կարեն գտանել խնդ-րողք եւ զմակագիր գործոց նոցին, զորոց ուրեք ուրեք նշանակեմ եւ ի ստորոտս խуից այսր մատենի՝ զանուանս եւ զգիրս, զանդ զբազմօք եւս արարեալ նշանակելովք լիմում՝ բնագրիս, զի ոչ համարեցայ ի պէտս կամ դիւրագիւտ բազմաց․ կամաւ յանձն առեալ զայս ԹերուԹիւն, ԵԹԷ այսպէս դատեսցի ի մանրախնդիր եւ տարրալյծ րանասիրաց ոմանց, քան բազմախուռն անուամբը, Թուօք եւ չափովք ճապաղել զլուսանցս եւ զքղանցս մատենին․ սակայն, որպէս ախորժէ ոք այնպէս վարկցի․ սոյնպէս եւ զամենայն գրած իմ եւ վարկած, եԹէ լայսմ եւ եԹէ լայլ երկասիրուԹիւնս․ շատ է Թէ եւ իւր վարկածն ընդ.. ունելի իցէ ողջախոհ գիտնոց, եւ ոչ ըստ իւր ուրդն կարծեաց եւ քմաց, որպէս յաճախեալ իմն երեւի արդ առ մերայինս, յաջ եւ յահեակ դատել եւ դատափետել, եւ քան զհեղինակն հեղինա_ կագոյն պանծալ, կամ զսխալանս ինչ նորուն ցուցանելով՝ գիտնագոյն եւ ծայրագոյն։ Քննադա, տուԹիւն՝ զգուշագոյն է ի գիտուԹիւնս, նա եւ գիտուԹեանց գիտուԹիւն։ Այլ ես, որպէս յառաջ. նում քան զայս մատենի, ինքնին խոստովանիմ, եւ ամենայն հմուտ արգահատէ, զի չիք ի գիտու, նիւնս փոփոխական քան զաշխարհագրունիւն եւ դժուարին ի ճշտել եւ ճշգրտել զբնականն եւ զբնակչական․ մանաւանդ. ուր ի միում (որպէս ի սմին ի 🏿 իսականի) ոչ ընդարձակ աշխարհի կամ նահանգի՝ իբրեւ 3000 տեղիք իցեն յիշեալք՝ հին եւ նոր, յորոց կարեւորքն եւ ծանօԹագոյնք մուծեալ են ի տեղացոյց տախաակին․ որ ըստ ՆիւԹական տարածուԹեանն փոքր է քան զվ_լրա, րատայն եւ զ $\|$ իսուանայ, այլ հաւասար է նոցին աշխարհագրական չափովն, $^1/_{800}, _{000}$. եւ յանձկու $_{\star}$ <mark>Թեա</mark>ն անդ իւրում յոլովագոյնս բովանդակէ անուանս, զորս եւ <mark>հարկ</mark> էր նրբագունիւք գծագրել տառիւք, որ եԹԷ ոչ ամենեցուն աչաց Է դիւրա<mark>մատո</mark>յց, բայց լաւագոյն դատեցաւ՝ առ ի զնոյն զառաջնոց քարտիցն չափ անվոփոխ ունել, զապակիս օգնական ընձեռել այաց, քան ի բաց Թօ. շատակի նոցուն՝ ինՋնին իսկ մէն յիշատակարանք են յաւէտալուրք։ Նա զի ըստ բաղդի եւ ըստ անկշիռ երախտեաց պատմչի աշխարհին Սիւնեաց՝ ՕՐԲԵԼԵԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ**Ի ԵՊԻՍԿՈ**ՊՈՍԻ, յո-<mark>գնա</mark>Թիւ քան զայլոց աշխարհաց՝ աւանդեալ են մեզ <mark>անու</mark>անք տեղեաց սորին․ եւ ըստ մեծ եւս բաղդի՝ ոչ սակաւք յայնցանէ ծանօԹք են ցարդ եւ դրիւք եւ նովիմբ կամ այլայլեալ կոչմամբք, շատից եւս ունելով յիշատակս պատոնականս եւ արձանս եւ ձեռակերտս, գորովք զանց առնել՝ անինար էր ինձ եւ աններելի․

միածնի. ոչ միայն զի նաճոյ էր ինձ եւ ի պէտս, այլ զի եւ աւագ այօք քննեալ եւ ոճով եւ ուշով գրեալ քան զայլս ի համազգեաց․ յորս՝ յաւել ինձ եւ նամակաւ հարցեալ՝ գիտելիս ինչ․ վասն որոյ եւ ընկալցի արդ լիուլի զշնորհակալիս իմ, եւ ի Ժամու՝ զբովանդակողն յինքեան զօ֊ Ժանդակունիւն իւր։ Ըղձալի էր յոյժ, եւ աւա՜ղ, զի չէր նմա գործի կամ առ նմա անձն լու. սանկար, որպէս Պ․ ՄԱՏԹԷՈՍ ՓԱՓԱՉԵԱՆ․ սա՝ յայսմ՝ մասին՝ (զարդու եւ ակներեւ ցուցակու, Թեան տեղագրելոցս վայրաց) երախտաւոր քան զայլս է․ 50 եւ աւելի պատկերահանուԹիւնք նո կամաց՝ շրջեալ եւ հանեալ էր, եւ է որ ըստ խնդրոյ իմոյ․ ընկալցի եւ նա ընդ շնորհակալեացս՝ որպէս երբեմն զդոյզն նուէր քաջալերական, եւ այժմ զբովանդակուԹիւն տեսարանացն ի Սի. սականիս, ընդ. նմին եւ զմաղԹանս իմ յառ. յապա յաջողուԹիւն իւր։ — Ըստ այսմ մասին՝ մարԹ Էր ինձ յիչել յօտարաց՝ զծանօթն արդ կովկասաբնակ նամազգեաց մերոց՝ զեպչու փռանկ մար. դաբան, ընդ որում փոխանակեցաք ծանօԹուԹիւնս ինչ, նա ի տեսոյ, ես ի գրոց, որ եւ մինչ. չեւ էր հրատարակեալ ի ձեռն տիկնոջ ամուսնոյ իւրոյ զուղեւորութիւն իւր, À travers l'Arménie Russe (յլիագրին Tour du Monde, Հատ. կլլ, 369-416, կր, 225-288. կդ, 179-224), ետ ինձ քանի ինչ ի լուսատիպ պատկերացն․ այլ իբրեւ խնդ-րեցի ի տպագրողէ գործոյ նորին՝ զերիս ի **հրատարակելո**ցն (զտեսարան **|**Մեդրոյ եւ այլն), տալ իմովսանն փորագրել վասն |]իսականիս, սա

ու կաբարբցաբ։


Արդ որ զիարդ եւ է, եԹէ ոչ ըստ չափու ըղծիցս եւ ոչ ըստ յուսադրուԹեան ուքանց ի սա, տարել իւխք, (այլ որպէս յաճախն՝ եւ ոչ իւխք), գէԹ րստ չափու կարողուԹեանս գլխաւորեալ զյետին զայս երկասիրութիւն տեղագրական Հայաստան կողմանց, ընծայեմ ոչ սոսկ հայրենա, սիրաց՝ այլ մանաւանդ եւ բանասիրաց, որք կարողք իցեն ոչ միայն հասարակօրէն ընԹեռնուլ կամ դիտել զսա իբրեւ զմասն ինչ Հայաստան պատկերի, այլ իբրեւ զմասն՝ որ ընդ նմանեաց այլոց ունիցի եւ սեփական տիպս, ե՛ւ ըստ բնուԹեան երկրին եւ ըստ բնուԹեան բնակչացն․ որ. պէս անկ իսկ է ակն ունել եւ պահանչել զայս ի միոյ միոյ աշխարհաց կամ նահանգաց՝ որոյ եւ է երկրի եւ հայրենեաց․ զի Թէպէտ Նոյն հող եւ ջուր է ամենայն ուրեք՝ այլ ոչ եւ նոյն բերք եւ բոյս<mark>ք։ Ե</mark>ւ ոչ փոքր եւ վարկպարազի տախտակ պարզէ **Սիսական, տա**ռատպեալ ի հա₋ մագոյից Հաստչէ՞ս, առ բնաքմնին եւ հասու տեսանելիս, կոյտ կոյտ կոհակացեալ եւ բրգածեւ բարձամբքն, եւ որակ որակ քարեղէն մետաղական եւ բրածոյ կազմուածովք, որք բազում ինչ ունին ասել եւ ուսուցանել մտացի քննողաց․ այլ եւ ի վերին երեսս նայողաց՝ չեն անզանա, զանք. շատ իցէ ակն մի եւեԹ արկանել ընդ. չորեսին կողմանս երկրին, եւ ահա յինքն կրԹէ ճիւսիս՝ ճրաշատեսիկ կասլուտակային ծաւալմամբ գեղածիծաղ ծովուն Գեղամայ, ընդարձակա_֊ գոյն եւ բարձրագոյն քան զգերահամբաւեալ լիճս եւ ծովակս Հելուետիոյ եւ իտալիոյ, եւ ճո. խագոյն վտառ վտառ ծննդովք համեղաճաշակ լուղակացն. — հարաւ՝ վակժոյժ ապառաժահոս՝ ոմի գու երևեսմունուն, ետևովեգ վամիւե Թևոսխոմ՝ նսն, իենքու մեմջուխ ջոց ղոմևորկոր, խուտր խայտալով եւ կայսուելով խաղան Թափին գետակք եւ վտակք բազմաներձ ձորոց եւ գաւառաց, եւ քամիք լերանց Դարուայ, եռացուցանել երիտասարդացուցանել իմն գոգջիր զանձերանալին զայն այրարատեան մայր եւ մատռուակ արգասու արտորայից եւ հուԺկու արանց եւ հզօրեղ եւ հանլ. ճարեղ կանանց․ որպէս յանդիման արասցէ եւ դոյզն յիշատակ ի բնագրիս (յէջ 7)․ եւ որպէս, օրինակ՝ իմն, անջինջ եւ անզեղջ կան եւ մնան կերպարանք երկրին, նոյն գունակ փոքր ի շատէ եւ բարք երիռոցը, ի ոիժեարբ "ումարսբարը ըսնիր ի տառղաւթբար դիրչեւ ի ղբևո գաղարաի՝ ընդ այլեւայլ անկեալ եւ անցեալ իշխանուԹեամբք տոհմից եւ լեզուաց, այլ գնոյն իշխողական եւ տիրական կրելով ոգի՝ յաւուրս Հայկազնեան եւ Սիսական Նահապետաց, ի ՆախարարուԹեան խրոխտ տերանց Սիւնեաց, առ նորագոյն հարըստուԹեամբդ Հայոց, մինչեւ կանգնել ինքեանց եւ Թագաւորական գահոյս, եւ յետ այնը իսկ պերճտնալ եւ սիգալ ի համահոգի տոհմս ՏաԹեւեանց եւ Օրբելեանց, Ջուանշէրեանց, Մանեւանեանց եւ Համտունեանց․ եւ նուսկ՝ տանուտերուԹեամըք մէլիքաց Գեղաքունեաց, որք զչորեքնազարամեայ Թագաւորս աւուրց Աբրանամու եւ Ցեսուայ յի֊ շեցուցանեն․ — Մեծոգի եւ աշխարհաշէն բարուց նոցին ոչ վոքը նշանակք նշմարին եւ ի գիրս,

եւ յաւերակս դաստակերտաց. ոչ միայն ապարանք եւ Հովատունք (190) եւ տաճարք հանգստեան եւ զբօսանաց, այլ եւ մարդասիրականք, Հոգետունք կամ Հոգւոց տունք (133. 161. 165), Դորետունք (165. 378), Հիւրանոցք կամ Հիւրատունք որ եւ Պանդոկք (303. 535–6), կարաւանատունք (164), կատարքը (47. 145. 161. 365, եւ այլն), Նաւք եւ Նաւատեղիք անցից ընդ Երասխ (517–8), Սրանոցք կամ Ջրաղացք (114. 120. 361. 517–8, եւ այլն). Թող զեկեղեցիս, զժամատունս եւ զվանորայս (յուրոց 180 իւ չափ յանուանէ յիշին)։ Բայց հայեաց եւ յանդաստակս անդր երկուց կենաց, ի հիացուցիչ Տապանատունս եւ ի դամբանա Նորավանից եւ այլոց. եւ այս շատ իցէ առ յինէն։

Սակայն մի՛ լիցին մոռացօնք ընդ սոցին եւ ճարտարուԹեան շինողացն արուեստաւորաց եւ առատաձեռը շկրանան, իշխարան գու բստին՝ այ՞լ բու նրաարբան գու բնարատեկատն․ Ղուսն սակի են՝ պէսպէս կոչմամբք, <u>Հարսյարապետքն՝ որք *վարդապետ* եւ ռամկ</u>օրէն *վարպե*տ արձա, Նագրին․ որպէս, **ց**երչեց նրէց, ցերենչեց, ցոցչե, <mark>երջցեց, ե</mark>շչեւ երչ8, եւ ցթեթեր որդե դեմեն բան_ դակողը խաչարձանաց, որը կոչին *Գրիչ, Նկարող, Նկարարար, Քարագործ* եւ *Լրազմող*, որպիսիք, գրե գոր եպիսկոպոս, թորացել, ցով:առելո գորսեցի, շեռուկարը արգոր, արերի որդի թոցառանաց, վարդաչ, ղերջեշ, եւ այլն․ ընդ որս եւ փայտաքանդակք ճիւսունք Գրանց տաճարին Սեւանայ թոզչեչ............................... փափագողը՝ ի ցանկս նոցուն եւս եւ ներկայ մատենիս։ — Ռայց ստիպիմ՝ աստանօր ոչ առանց Թաղծութեան յիշել, զի ոչ ըստ արժանեաց արուեստաւորացս եւ արուեստին, եւ ոչ ըստ պա" ճանջից Ժամանակիս՝ խնամ տարեալ Է մերոց նորոց արուեստագիտաց եւ պատկերա**ճանի**ց՝ ճշգրտիւ յանդիման առնել մեզ, ոչ լոկ զբովանդակ շինուածոյն կամ զաւերակին տեսիլ, որպէս առնեն յաճախ, այլ զբաժինսն եւ զւնսնրամասունս (détails) ճարտարապետական մասանց եւ քանդակաց, յորոց տեսլենէ եւ քննուԹենւէ՝ մարԹ է քաջիկ եւս ի վերայ հասանել չափու գիսու. Թեսմս *Վարդապետացն* մերոց, ի հազարամեայ Ժամանակի․ սակաւուց ոմանց խաչքանդակաց ընծա, յեալ են մեզ լուսատիպը, այլ եւ ոչ նոցին մանր զարդուց եւ մասանց։ Զսոյն ի դէպ է ինձ ասել եւ վամն արձանագրութեանց, որք ոչ նուազ պատուական աւանդք են ազգային պատ, մուԹեան․ եւ ԹԷպԷտ աւելի քան զ ⁽⁽⁰⁾ ամբարեալ կան ի մատենիս, երկար կամ սուղ, այլ սա_֊ կաւ ինչ Թուին առ ճոխուԹեամբ Սիւնեաց, Եւ ոմսնք ստուգագոյն ընԹերցման պէտս ունին։ <u>Զարմանալի իմն է այսպիսի անփուԹուԹիւն կամ անձեռննասուԹիւն մերայոցս, ի յաճախել արդ</u> ուսանողաց ի վարժարանս եւ ի համալսարանս, եւ ի ստէպ ճառատել գրչաց զքննուԹենէ եւ զպահպանուԹենէ ազգային յիշատակարանաց մանաւանդ զի սոքա միակ անխաբ հայելիք են նանճարդ եւ ոգւոյ նախնեաց վերոց․ եւ Ժամանակ՝ եւ որ չար քան զժամանակ՝ ամ րստ ավէ եւ օր աւուր կրծէ, ծախէ եւ ծածկէ գնոսին։

Ընդ մեծոգի եւ մեծագործ բարուց Սիսականաց հրաշափառ հանդիսանայ եւ եկեղեցի նոցին՝ յառաջադէմ ընդունելուԹեամբ աւետարանին՝ ի Բարդողիմեայ եւ ի նորուն աշակերտաց եւ ի մեծԷ<mark>ն Մ</mark>եսրովպայ, **հնագոյն հաստատու**Թեամբ եւ յոլովուԹեամբ տաճարաց եւ վանորէից, պան_֊ <mark>ծալի շ</mark>արունակուԹեամբ եպիսկոպոսացն եւ մետրապօլտաց, ի սկզբանէ <mark>Դ դ</mark>արու մինչեւ ի սկիզըն մերոյս, եւ առաւել եւս պանծալի *վարդապետարանաշն*, գեր ի վերոյ հանուրց ի հայրապե_֊ տունեան Հայոց, որ եւ յայտ առնէ զառաւելունիւն վարդապետացն ի գիր եւ ի բան, նեպէտ եւ սակաւ ինչ հասեալ կայցէ վեզ ի նոցուն․ այլ անմոռաց մնան եւ մնասցեն ի դպրուԹեան մերում՝ անուանք ||**ձեգա**չոցեաչ, եւ ||ողոցաչեչ, Պեջբոցի եւ ||Շաբորագ_աչաչի *Քերդողաց*, գերօրինակ իմն փոխանորդաց բամբռանար բանաստեղծիցն եւ վիպասանից գինաւէտն ԳողԹան, ոչ գիտեմ օշարակաւ այգեռուղխ բերոց գաւառին խանդավառելոց, եԹէ իսկունեաց ոմանց մուսայից։ Ոչ է վայրապար եւ աննկատելի հանդիպումն, յանձուկ սահմանի անդ ձորակաց հարաւակողման աշ խարհի՞ս՝ առ անլռելի կարկաջանօք Երասխայ, բարգաւաճելն արուեստիցս, գոյգ ընդ բանա. ստեղծուԹեան, երգահանուԹեան, եւ հանդիսից կրկնադէմ կրօնից, հանդերձ յատուկ բարբառով <u> Չ</u>օկ լեզուի, եւ ընծայունեամը ճարտար գրաշարից եւ տպագրողաց յօտար աշխարհս <u></u>եւրոպիոլ․ ընդ որս՝ եւ ի յետին դարս՝ համատարած վաճառականուԹեամբ Ջուղայի, որ հարկաւորեաց զիս ուրդյն դրուագաւ ճառել երկարօրէն։ Այլ ի ըււր եւ ի յիշատակ անուան աւանիս՝ անճնար Թուի







գերՈՍԻՍի եւ ՔՍԻՍՄՄՐՆԻ որոց, բնքնաաժութբաղը, փառճ ի քերձամուղը բւ ի Ղաւիաբարոր։ գայ իրչ բևե՝ ընս՝ բնքան Դբգբնարօծո ի ոռսուբնակար Շայերիսու՝ բւ Հրոնկու անգարարաւսնեն Արտասանին թարարանը հարարանական հայարարանը, անությանը, աներակարությանը հարարաւունըն





ազատասէր բուսոյ բարուց բնակչացն , և զոյգ նմին կորո վոյ քա)ութեան․ որով և ընդերկարագոյն դիմակալեցին օտարաց բունութեան, օժանդակս ինքեանց ունելով և զբնական Հաստուած և զդիրս երկրի իւրեանց, որպէս յետագայքը ցուցցեն ընական և պատմական ծանօԹու Թիւնը. և որոց գլխաւոր այն, զի յետ վաղ ուրեմն խա. փանման Հնոյ Հայկազնեանն իչխանութեան և անուան՝ յերկրէ անտի գոր կալան [[րչակունիքն, և յետ նոցին Հարստութեանն բարձման, միայն ၂իւնեաց իշխանը կո չին Հայկազունը, առ ՀարստուԹեամը Ռագրատունեաց, որպես և յառաջ և յետ Նոցին։ Ընդ սժին ոչ աննչա Նական է և այն , զի աչխարՀագրական դրիւքն՝ օտարա խառն իմն է երկիր դիւնեաց․ գի Թէպէտ ի միոյ կողքայ Նէ փարեալ է Հարադատ Հայկական գաւառոջ [[լրարա տայ և Վասպուրականի, այլ յայլոց կողմանց այլալե, գուօք կամ կիսաՀայովը, եԹէ օրէն իցէ այսպէս ասել. որպիսիը են Ուտիացիը ի մասնէ Հիւսիսոյ , ||րցախայինը՝ յարեւելից կուսէ և մարապարսացի ([տրպայիկը՝ ի Հարա, ւոյ . Թող և դժերձաւորուԹիւն վրախառն Գուգարաց ։

Պարզագոյն եւս կաժելով նկատել գդիրս Սիսական Նահանգի, հին աչխարհագիր մեր համառօտիւ սահ » տոլ, ընդ մէջ Երասխալ և |[րցախալ»։ |[րդարեւ ընդ բեաչխարհին Այրարատայ զօդեալ է աչխարհն Սիւնեաց յարեւմտից կողմանէ, Հաւասար ի Հիւսիսային ծագացն *վի*նչեւ ցՀարաւայինն . այսին_են է, ի Վարաժնո**ւն**եաց *վի*նչեւ ցՇարուր և ցՈտն Մասեաց , ան**ջրպետ ընդ նոսի**ն ունելով զարեւմտեան պար լերանց ծովեզերն Գեղա, մայ, և որ ի Նորին Հարաւոյ են լերինը Վայոց Հորոյ. <mark>զա</mark>ժենայն գՀարաւ–արեւմտեան և գՀարաւային տահմանա Սիւնեաց, անքրպետելով ընդ նա և ընդ Վասպուրական և ընդ Ատրպատական Հայոց, մինչեւ յանուանի կա մուրչն խիւտաֆէրիյն, և ի ստորոտս լերանց կամ բար <u> ձրաւանդակին՝ որ անջրդետէ ընդ օժանդակս իւր և ընդ</u>

կուր գետ, ուր և գործէ զարեւ ելեան սահման աշխարհին, ցատուցանելով յլլրցախալ . Թէպէտ և ոչ է քաջանիչ յայսմ մասին սահմանագիծն , որպէս և ոչ քաղաքական վարչուԹիւնն , մինչեւ կցորդաբար կոչիլ Արցախոյ՝ Փոջր րնդ մէջ արեւմտից հիւսիսոյ Ուտիացւոց աշխարհի և ա. րեւելից Հիւսիսոյ Այրարատայ , յորս գրեաԹէ խառնին և արեւելեան Հարաւային եզերը Գուգարաց։ — [[_][յուչ լիցի աստէն ի սկզբան բանիցս, զի գԷրասխ սաՀմանելով յահրուդակն Որորրան աչխահշիս, ի ըրևեռ ի *ըս*մը փա**կ**բ⁻ և յանախագոյն իսկ՝ ի համար Վասպուրական աչխարհի էր կարգեալ, վասն որոյ և սաստիկ վէձք Հակառակու. Թեան եղեն տերանց երկոցուն աչխարՀացն․ այլ բնական դիրը՝ Սիւնեաց պահանչեն զայն , ըստ այժժեան բնԹա. ցից գետոյն վեծի, որ Թերեւս յառաչին ժամանական Հպագոյն էր յայլ գաւառս աշխարհին , և արտաքս (յաէ. մէն) Թողոյր գՆախճաւանն գաւառ։

Երկու մասունը որիչը են աչխարհին Սիւնեաց. մի հիւսիսային՝ անձուկ և բարձր, այն է պարատափ կամ տայտ Ծովուն Գեղամայ , որ՝ եթե, ոչ ըկէս՝ գրեաթե գերիր մասն երկրին ծաւալեալ գրաւէ. և ամենուստ մեալով այլոց մասանց երկրին և գետոց, բայց միայն ի ժիոյ ծայրէ արձակելով պառուն Զէնկի, որ գործէ ըզ. Հրազդան գետ Այրարատայ․ և զի այսպէս զատուցեալ է ի ընուստ ի վեծէ զանգուածէ աչխարհին Սիւնեաց, ժինչեւ առանձինն իսկ Երդոր կամ ԱշթուՀ ԳեՂոյու կոչիլ , Թողցուբ զբնական նկարագիր նորին ի տեղագրու " *թիւ*ն երկոց**ուն** գա**ւա**ուաց**ն** (Գեղաքունեաց և **၂**ոթից) գոր Նայն բովանդակէ։ Իսկ երկրորդ և մեծագոյն մասն մէջ կայ Երասխայ, և աչխարՀացն Վասպուրականի և Արցախոյ , ձուաձեւ իմև ձգեալ ի Հս . Մ . ընդ Հր . Ել . իթ. րեւ Հարիւր մղոն ընդ երկայն և եշԹանասուն ընդ լայն։



ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ

գեւս գիչանի ընդ Հարաւ ց՝ 1800՛, և եւս գիրՆ Միւնեաց լեռնակողմն խոնարՀեալ ի ԵՐԻՆՔ․ — Գրեակողմն խոնարՀեալ ի

Նուազ յելս սահմանացն։ Թէպէտ և ոչ որպէս զԳեղամայ պարատափին՝ միայար գօտիք իցեն լերանցն]]իւնեաց, այլ և զատի ժեկնակ լերանց երեւին և կցորդը կամ չարը ինչ նոցին, որը և յայլ և այլ դէմս իշուցանեն գետու. և գլխաշոր նոցին գրելի է զմիջակացն պար , որ ի Հիւսիսոյ կուսէ, այսինըն ի Հարաւ - արեւելեան ծայրէ Գեդա, մայ պարատափին (կամ լերանց ՍոԹից) խաղայ ու_֊ ղիղ ընդ Հարաւ արեւելախառն, մինչեւ յերասխ, և զարդիս յանուն Հարաւագոյն գլիսաւոր գագաԹանցն՝ առ Հասարակ կոչի Ղազանկելու լերինը. յորմէ ի վեր ընդ հիւսիս ելանելով՝ նչանակին ի պարուն լերինքն Շերեր - սու , Այուն ? -- բարձրագոյնն լերանց աշխարհին որպես և մի ի բովանդակ Հայս, Գափումիկ, 12060' .- Ա. լանկեզ , Մարմուսագլը , Արլւի , Արաստան , Տեվեկեօգ , որ Հի<mark>ւսի</mark>սագոյն սար Համարի պարուս , որպէս Հարաւագոյ**ն** Սարիփափախ ի Մ․ ի Հր․ Ալանկէզի և ի Հս․ Մեզրեայ։-Հիւսիսային մասն պարուս յարեւելից կուսէ, և Հարա ւակողմն պարատափին Գեղամայ՝ ի Հիւսիսոյ կուսէ՝ պարսպեն զվայոց ձոր գաւառ, որպէս և այլ լերինը ոչ նչանաւորը՝ ի Հարաւոյ , և նուազագոյնը եւս յարեւմտից , գործելով լայնածիր ձոր ժեծ. զորոց Հաւաբելով զաղբերս՝ յօրանայ Արփա գետ , և Հուն գործեալ ընդ արեւմուտս՝ իչարէ ի ժաշար Ըտևուհան ՝ կ ափբ[Դբևառի ։ — Քղար իմն՝ այլ երկայնաձեւ տաչտ կամ ձորագաւառ գործեն լերինք չրջափակը ոչ ըարձունը՝ ի հարաւակողմն աչխար **հիճ՝ զհովիտ Չավընդուր գետոյ , որ և վասն այդ օրինակ** առանձնութեանն և ամրութեան՝ կոչեցաւ ի Հնումն յատ

ł Ըստ Պատմութեան Ղափանեցւոց, կամ Դաւթի թեկի։

նու,*այսին*քն կապանու, *յանուն գլխաւոր և իչխանանիստ* ավրոցին . և ըստ ռավկաց՝ վասն չրջապարոյը ամրափա կուԹեանն՝ ծուղակ իմն Համարեալ և կոչեցեալ, զի զայս նչանակէ **անու**նդ ի Թուրը լեզու։- _Մրեւմտեան պատուար ձորագաւառիս է Հարաւսյին մասն վերոյիչեալ Ալանկէդ լերանց․ Հիշսիսայինն՝ խաչպօլու լերինբ կոչին¹․ իսկ Հա րաւակողմանն գլխաւոր լեառն է խոշստուփ , 9885՛։ - [[_ րեւելեան լերինը անվրպետը օժանդակաց Շրասխայ և **Կուրի և երկոցուն աչխարհացն Սիւնեաց և Արցախոյ**՝ չեն ինչ բարձունք, կամ ոչ նչանակեալ այնպիսիը․ իսկ արեւելեան Հիւսիսայինը՝ որը դայժվեան նաՀանգն Գան ِ ձակայ գատուցանեն ի Գարապաղէ (|| իւնեաց) , յայտ_֊ Նանիչը և Հաստակառոյցը եւս են․ որպէս արեւելագոյնն Գրրբ-կեօզ, 8770՛, Շալվա, Իսդիսու, և բարձրագոյնն **∏արիեար-∏ր**ոչալու, 10705′, որ կայ յարևւ**ելե**ան Հա_ րաւային ծայր պարատափին Գեղամայ և ի Հս․ Տէվէ_ կէօզի։ — ի ժիջնաչխարհին, ընդ ժէջ գետոցն Որոտան ր Համաևու, վար որասւէ նրևիչն Ղնվան, Ժնմեն-տիսման՝ որ Թուի Նոյն ընդ. կոչեցելումն (ի Տիւպուայ) Օղլախ – աթմազ , իսր 11070'. Ըշրիսլու , 10870'. Քեչալ տաղ , 9990'. Ճանգուրթարան , և այլն ։- **ცարեւելից Հարաւոյ Տա**Թեւու Նչանակի Թափասար լեառն^ջ, և ի Մ․ Հր․ սորա՝ Քամպիլ 10500՛։- ի վայոց ձոր յիչի Այրիժու լեառն. ընդ մէ նո րին և Ծղկաց՝ Մեխդուխան բարձր լեառն 11180՛։ Ընդ մէջ _Ծղկաց և <u>Չ</u>որոց՝ իշչթեփե լերինք 9000՛․ **կա**սպել որ է Գազբոյլը նախնեաց, «ժեծ և դիտաւոր սար» կոչե ցեալ ի Մ․ ՏաԹեւոլ, ուր նչանակին յաչխարՀացոյցս Գարագայա և լՐուրույ կամ լՐուրային ? ։ — ի *Հարա*նդ Նախնեաց լիչի Չագեձորոյ լեառն՝ ի կողմանս ՇնՀերոյ և **խ**ոտոյ . իսկ յԱղաՀէճը՝ **Ե**ղջերոշի-խոս սար. զարդիս Նչանակի **Չ**ալպուսուն **590**0 ։ խնդրելի է ի սոյն կողմանս և Քուռակախաղաց լետուն 3։ — Իսկ յարեւմտակողմն

3 Սուսակախազաց գրհալ յաթժմետի օրիհակս պատմութեամ

⁵ **փ**սխարա**ի տ**Ոսսևիի, ԳաՈՐ Ֆահառ մեի Ոեւամե քրատրչ:

Սիւնեաց յերնչակ և ի Նախճաւան՝ Օրաժին? 9910'.
Երդանյու (ՕՀուտ), 7482', ի Հս · Ե · Ջուղայ , Թիու ?
8425' · Դարու՝ ի Հս · Ջուղայու և ի Հր · Երլանլուի, (Թըւի գրեալն Տաղրի ի ռուս աշխարհացուցի, 5980'), որ
է նոյն իսկ լեառն Գարուայ , այսպէս սխալ ընԹերցեալ
կամ գրեալ ի պատմուԹեան Սիւնեաց Օրպելեանի։ - Ի
կողմանս յայսոսիկ և Ջորոց գաւառին են և Շրիւ եուրթի, 11178' · Ազնաբերդ , 8900' · Սարիփափախ կամ Սարիեադախ ¹ ընդ մէջ Որդուատայ և Մեղրեայ , 8322'։

3. Գեծգ. — βոլովուԹիւն լերանց աշխարհին Միւնեաց ինընին յայտ առնէ և զջուրցն յոլովութիւն և բազմա, դիմի ուղղութերեն. որոց վկայէ և հին այխարհագիրն՝ ասելով զգաւառացն, «անցնիւր Համանուն գետովքն». որոց գլխաւորը են Մրփա ի Վայոց ձոր, որ ի չրջարոլոր յերանց իւրոց ժողովէ զջամիս նոցին և խաղացուցանէ յերասխ , անցեալ կտրեալ զդաչտն Շարուրայ․ օժան, դակը իւր՝ յաջվէն կամ ի հիւսիսոյ՝ են Ճանի-չայ, Քե թան-լայ , Ալագեազ որ է Եղեգեաց գետն , Ապանա , Էլբին , և այլն. յանեկե և ի հարաւոյ, Քեօմիշր չայ, Бազտ ? Irnznp լայ , Բուլաբ-լայ , Գինիյիր լայ (Կնիլիկ) , Թամայա լրգ կամ Ախուրա չայ, և այլն։ — Ցետ Արփայի գետք արևւնտեան կողման Սիւնեաց՝ են Նախմաւանու գետն, որ ի Թիկանց լերանց ւլայոց ձորոյ և Ծղկաց իչանէ, ոչ ոտիաշ օգտրմաիժե․ — Բևնըչտիս։ ժբար, Մերգտ-նա) րստ Թուրքաց, որ առ Ջուղայիւ անկանի յերասխ ։ ի Հարաւային դիմին ևն ոչ սակաւ մանր գետակը Հնոյն ԳողԹան և Արեւեաց գաւառի, և կոչին այժմ Գիլեան լայ, Տիսիս լայ, Որդուատայ գևտ, Մեղրայ գևտ, և այլ ոչ սակաւ գետակը, զորս ընկալեալ Երասխ ի Հարաւա արեւելեան փեղկի կամ պառակի բարձրաւանդակին **Սիւնեաց՝ Հզօրագոյնք են գետը, յարեւմտից կուսէ դի** վեալը. և նախ՝ սկսեալ ի Հարաւոյ կուսէ՝ ուր ժամանե_ ցաջ՝ Պասուդ , ապա Չաւրնդուրայ գետն , որ է Չորոյ գաւտոին (կամ Ղափանու) և կովսականի (ԳրՀամ). և որ յաքժէն՝ ի Հարաւոյ արեւմտից ընդունի զՈղջի գե. տակ։ - ի հիւսիսոյ և յելից Չաւընդուրի երկռբին հզօրա. գոյն գետը՝ Բարկուչատայ և Հագարու՝ զվեծ մասն Սիւ-Նեաց ոռոգանեն, և ժերձ ի վախճան ընԹացիցն՝ յիրար խառնեալ անկանին յերասխ ի սպառուածի անդ սաՀ մանաց աշխարհին։ Առաջինն բազմաթիւ վտակօք իչեալ ի Թիկանց լերանց Վայոց ձորոյ և ՍոԹից՝ արրուցանէ ղվեծ և գվիչին մասն Սիւնեաց, յոգումըը օժանդակզը մանը դետակօք. որպիսիք են յահեկէն՝ որ է ի հիւսիսոյ՝ Պայրգյը, որ Թուի Չկնարաժի գետն ըստ Նախնեաց, II ուխորթոյեան?, Քելի սու, կորեսի ջուրն, Հայիձորոյ գետն, և այլն. յաջնեն կան ի հարաւոյ, Дոիղլի չայ ?, Միսիանու գետն, Այրի չայ, Որոտան գետն, Տարեւոյ ջուրն , Ձնշու գնտակն ի Բաղս , և այլն ։ Ի սկզրանն՝ գետս այս մեծ կոչի գրազար չայ , ի միջակողմանն՝ յանուն նորին Հագարու գետն, որ Թուի կոչիլ ի Հնումն Ագարա. կի, (դի է դեօղ մի յԱղահէջ Ադարակու դետ անուտ. նեալ), զարեւելեան մասն Սիւնեաց ոռոգանէ, ղԱղա. Հեձ, գՀարանդ, գՔայունիս, և գետանալ յադրհրաց ջուրց իչելոց ի Թիկանց լերանց ՍոԹից և Արցախոյ, մա. նունս ընդունելով օժանդակս յահեկէն , զի անձուկ է *մաս*ն այն Հովտին, յերի կալով լերանց _Արցախոյ. և են գետակըն՝ ըլեացլի, որ Թուի ըրահելոյ գետն ըստ ա. Նուան գաւառին, Չիւամանի ?, լ[ելիր, լ[ուսուլիմա?, և այլն. աջակողժեան օժանդակը են Ղօրչի չայ ? , ինտերեմ և Ղօլախ - չայ , որը յիրար խառնին , Ագօղլան կամ Ագ. սու, որ ընդ այլոց վարարէ զբուն գետն . Թուին սոյա Քաչաթաղուց գետ կոչեցեալ ի Հնումն. յետ այսոցիկ փո. **ք**ունս ոմանս ընդունի վտակա Հագարի յայսմ կողմանէ (յաքժէ), գի անձուկ երկիր անքրպետ է ընդ նա և ընդ Բարկուչատ ։ Մասոցիկ աժենեցուն խառնուրդը գործեն զգլխաւորս զայո գետոց <u>Սիւնեաց</u>, (զայժվեա<mark>նս Պազար</mark> չայ — Բարկուչատ — Հագարի), որ կոչէր առ նախնիս Աղաւնոյ գետ ՍիւՆեաց, ըստ վկայուԹեան Սարգսի կա. Թողիկոսի Ա, զորժէ ասէ (ի կոնդակի միում), ընդ Ալա Հէջ գաւառ իջեալ «Հատանէ ժինչեւ ի Քարավագին կա_֊ ի սաՀժանս ՇնՀերոյ. — Վարարակ որ և Ձագեձորոյ չուր՝ ի սահմանս ՏաԹեւու, Թերեւս Նոյն իսկ դետակն որ առ Նովաւ անցանէ, և բղխկր ի Համանուն Ձագեձոր լեռ. րի։ -- իր և ոչ ոտիաւ գեօվե, գրու հասիւ հաևարերանե ի Նախնեաց անտի , նչանակք գետակայ՝ յորոց առին կամ ետուն զանուանս․ այսպիսիք են ի Վայոց ձոր՝ Աղձի գետ, Արտոց-գետ , Ծրտոյ-գետ , Միչագետը . յԱղահէճը՝ Ար տագետ, [[գարակու-գետ․ ի Ծղուկս` [[պարանից-գետ և Գետակիցը․ ի Բաղս՝ **Կ**րաւագետ և **Ա**րաւագետ․ _/|<u>|</u> լլախ՝ Բողոտի չուր , Գինական-գետ և Ուսական-գետ . ի <u>Հ</u>ահուկ՝ Արկու-գետ․ Թերեւս և Շայի-գետ ի Կովսական , որ Շա. շիկետ գրի ։ լ. և ի Սոթես խորթա-գևտ գիւղ ։ — Դարձևալ յոլովագոյն ևսս (ոչ պակաս քան զերեսուն) Համարին գեօղը Ձոր րառիւ բարդեալը, որը նոյնայէս երեւին նչա, Նակիչը մանունց վտակաց, միանգամայն և խորանիստ դրից կո**ղմանց** իւրաքանչիւր գաւառացն³, յորս են և ոմանը ֆոր ըառիւ կցորդհայը, որպէս Բակափոր և 🏬 վեսնափոր ի լլոթա, և այլթ այլուր։

4. Լոու Առբերդ եր Հարդը — Արեւմտեան հիւսի, սակողմն միջնաչխարհին Սիւնեաց կամ Ծղուկը գաւառ՝ մինչեւ ի սահմանս Վայոց ձորոյ, ամայի և ոչ փոթը մա, սամբ քարուտ և խձուտ է, այլ և ձախնային և են անդ չորը կամ հինգ լիճը Այլահ-կեօլ կոչեցեալը, մղոնաչափ

գոր , Ժոլմ) – գոր ։ Սւրքի գոև , Ոքտոտիի գոր . — ի Ժրմանուրիո, Սփրտն գոև ՝ Ժոմո գոր . — ի Ոսեյո, Երևմտգոև ՝ Որտգոև ՝ Ծամանագոև մրօսքն ինվու , մարտարմագոև ՝ ուև բ Միդարովիա . — ՚Ուրբեր, Ճանարամագոև ՝ Ոտեմագոև ՝ Իրվարգան . — ի Ռովոտիտը, խոսնագոև ՝ գու ՝ Ոտմասագոև . — ՚Ո՛մաչեքն, Արմագոև մրօսքն րերև։ ՝ Որգափագսև ՝ Ոտմասագոև . — ՚Ո՛մար, Ժունարս և բոշմն րերև։ ՝ Որգա-

բ մտՈնսվա՝ սն անարը ռասւատաքվիր իրչ քրարաանեսւելիւր։ թր իրգ արսւարք ընտրակրաՐՖ ի քահառ պատր սեսն բ մարն ահահի ↑ Սևաքը ռսհա բ տնքան թուս սղարն վրևմինրնիքան բևվնամակար

² Օրպելետե, Գլ. ԾԷ։

³ ի գաշառին Բալաց են Արկանաձոր, ի Մյուկս՝ Մեծաձոր, Մզջերը, Է ֆուսերը Բալաց են Արկանաձոր, Արձանաև Արձանաձոր, Ազջերը,

երկայնութեամբ, առաւել կամ նուաղ , Թերեւս Ֆա. ցուածը Շաղատոյ լձին ըստ Նախնեաց․ ժեծագոյն եւս լճակ Գարակեօլ անուն կայ ի բարձրաւանդակի ի միչի րարձրարերձ լերանցն Ըչըխլը , Քէչալ տաղ , ՃանղուրԹա րան , Թերեւս բաժակ մեծի Հրաբըզխի չիչելոյ։ — Են և ի կողմանս Շնհերոյ յամայի վայրս լճակը մանունը, յորոց ժին յիւր անուն կոչի . ուրանօր և Հանքաղբերը ոչ սա_շ կաւթ ընդ մէջ իւչթերիէ լերանց, ի հիւսիսոյ նորին և ի Հարաւոյ Բարկուչատայ գետոյն․ որպէս խայիլ պուլագ , **Ի**տի պուլագ, Ոսուգ պուլագ, և այլք։ Ի և ի ժիջոցի Ագարուլագ և Ղօչախ գետոց աջակողժեան օժանդակաց Հագարհայ՝ անապատ տեղի Գարաբեշիչ կոչեցեալ։ — Հանրաղբերը ած խայինը և երկաթահամը գտանին բա զում ուրել, որպէս յլիլախետն գևոչ Ծղկաց, ի Գա. րապապա Նախճաւանու. – Ձերմոշկը առ Սատանայի կա, *մըրջա*ւ *Տան*-եւու , ուր և ըաղանիս Հաստատեալ է.— Ծժմբաջուրը Տանձիկայ ի Վայոց ձոր։ — Նանաւորը և պիտանիք քան գքուրսն են Աղանանք Նախմաւանու, գո. ևոն շատրոնի ի արմաժեի ժաւատիր ։

5. Բորսըկընց Եր գենդընեց - Պիտանեցոյն բերբ]]իւնեաց՝ են բուսականքն , անտառայինք և դաչտային<mark>ք</mark> , որովը մեծ մասն երկրին ծածկեալ է, միսցն արեւմը, տետը դառիր Ամկան ըսւանբան ժանսվ․ վառը սևսի թ րովանդակ երկիրն՝ Հանդերձ դրացեաւն Արցախաւ՝ Գարապաղ *անուանեցաւ յայլազգեաց* , *որ նչա*նակէ Սեաւ այգի, իրրու եթէ յայգեաց բազմութենէ ստուե րացեալ։ Հին աշխարհագիր մեր յիչէ ի բերոցն բուսա_ կանաց՝ գ[[ռորտ՝ ի վայրի ծառոց, գ[լուռն՝ ի պաղոց, և ընդ անուանելոյն Potamogeton, որ Թարգմանի ստուգիւ Գետամերձ, այլ յայժմուցս՝ Նայադ (Najade) կոչի. և ահահանգու ընտրաշան է զրգաւելացի անկանը Նունձ, Ոսոնուֆարն Բաղարերդու . սակայն Հին բժշկարան մեր գրե. «Գերերի՝ Քիմն է». իսկ Ամիրտօլվաթ ասէ, «Քուրմ՝

– Մարդէն՝ Geranium Թարգմանեալ է զԳերերի, որ է ծանօթ ծաղիկն Աղաւնակտուց ի ժերոցս արդ կոչե. ցևալ։ — ի վայրի կամ յանտառային ծառոց՝ ծանօԹա գոյնը են կաղնիր ոչ բարձունը, որպէս և ոչ այլը ի ծա. ռոց , վասն գետնոյն բարձրուԹեան և ցրտուԹեան , բաց յափանց Երասխայ, ուր մեծամեծ Սօսիբ լինին. Թեղև, Գի, Տօսաիւ, և Նմանիը սոցին։ - Մայրեաց գուչակը են և գեօղը այդու անուամը լծորդեայը, որպէս Դիցմայրի և]ուցմայրի ի Կովսական, Թաղամայրի յլլրեւիս, ուր և լոկ Մայրի գիւղ, որպէս և Մայրադուրը ի Վայոց ձոր, Ponhամայրի ի Ծղուկս, և Գանձադանտաս ի Գեղաբու նի։ — ի պտղարերաց՝ ունի գաժենայն ազգ Հասարակ պտղոց . յորոց և գազնուագոյնոն յիչէ ||տեփ . (իրպելեան՝ ի սաՀմանս տարփալւոյն իւրոյ Տախեւոյ, զՁիթենի և ըզ. Թզենի, որ արդ ոչ երեւին. Թերեւս յետինն գտցի յե. րասիւեան ձորաՀովտի։ — ի կարեւոր տնտեսական բու սոց՝ բաց ի Հասարակ ընդեղինաց, Հատեղինաց և խա ւարտից, մշակին ի Սիւնիս և Բրինձ և Ծիստիսոտ, Մե. կոն, Բամբակ, կանեփ. և ի ձորակողմանս Երասխայ՝ Թթենի չատ՝ ի դարման չերամ որդան , յորմէ Հանեն մե տաըս պատուական , մանաւանդ ի կողմանս Ագուլեաց և Մեդրոյ. ուրանօր են և ազնիւ Дյգիը, որոց՝ բնակիչքն ճարտարը են ի մշակութիւն, որպէս և ի դարման մե. ղուաց , Հանելով լ եղր ազնիւ ։ — ի բազում կողմանս են րնդարձակ և պատուական պաճարասուն արօտավայրը ։

որևս մահահատաւերարը ». անք երկիր չկան իրչ՝ նուս աա երևս մահահատաւերարը ». անք անձար արմերեսերը ծրա ժվտոն զատրրիր տուբ. « Ըւ տեմ անձար արմերեսերիւր ծրա ժվտոն զատրրիր տուբ. « Ըւ տեմ անձար արմերեսերիւր ծրա սրքով. անք ձաւբ դրա անդանակար դիրերը հայրից բեւեսես հայութերը կրուարակար որաբ, առադիր դարաշար արաջուր հայութերը կրուարակար որաբ, առադիր դարաշա, ջուաբց՝ դահան, ը չսենսաարին գարուրճ. 6 սմ անրաարի արաուրո ը արակ ջարածիր Որգրուրճ ը Սակրն և Թերևս արա արարդան հեյա վանհարդան է անձարանակարնը սե և արարդան իրքեր վանհարդան, անաարիր արաան գունակիր արարդան կրուանարան, նրերիրը ը արաան գունակիր

երունին անույն՝ եւն անձան եր է իներ աղայն արգութան՝ եր ենա գանունը անվատրե է անձ՝ անձ անասան և եր անչ հայանան և արդատրել անձան անձան անձանի հայանան և անվատրել է անձ՝ անձան անձանին երուհայանը անդանան և կանդատի և տաշո անձանին երուհայանը անդանան և հարդան անձանան անձան անձան անձան և հայանան անձան անձան և անձան անձան

¹ Ըստ Շանհագարհանի , ի Պատմ․ Սիւհետ**ց ,** Ա․ 16 ։

ջ Սահփանոս Օրպելեան, Գլ. ժԱ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ



ԱՏՄԱԿԱՆ. — Սկզբնաւորութիւն երկրայ՝ ի զարժից Հայկայ է, այլ և աչխարհին Սիւնեաց՝ ըստ աւանդու. Թևան պատմչաց ժերոց, գրեաԹէ ան, աչխարհին Սիւնեաց՝ ըստ աւանդու. Թևան պատմչաց ենաց՝ և Թէպէտ այլ ևւս

տուհանը խատանեայը ի Նոսին և գրաշեսսլ իցեն զկողմանս կողմանս, այլ միչտ՝ և մանաւանդ ի վերանորոգութեան իչխանութեանց ազգիս յ՝ Թ և ի ֆ դարս, Հռչակեալ է Հայկազանց *տում յաչխարհի աստ* ։ Մ*ովսէս* Խ*որենացի* (Ա, "թ.) և այլը ըստ նմանէ ասեն, Հինդերորդ ի Հայկայ ձետ լինել գլիսակ՝ զանուանատու աշխարհիս, « զայր սէգ և անձնեայ, բարեզեղ, կորովաբան և գեշ » ղեցկաղեղն »․ որոյ Հայրն Գեղամ, « Սմա՝ զմեծ մասն » ընչից իւրոց տուեալ , և ծառայս՝ անձինս թազումս , » սա<mark>հմանս Հատանէ նմ</mark>ա ժառանգուԹեան՝ ի <mark>Շ</mark>ովէն » (Գեղամայ) ընդ արեւելս մինչեւ ցդաչա մի, ուր գետն » <mark>Երասի Հատեալ զքարան</mark>ձաւս լերանց՝ անցանէ ընդ » խոխոմս ձիգս և Նեղս, աՀագին դրդրչմամբ իջանէ ի » դաչտն **։** Աստ բնակեալ Սիսակ՝ լնու չինուԹեամբ զսաՀ » մանս ընակութեան իւրոյ. և զաչխարՀն կոչէ իւրով » *անուամբն* []իւնիք․ *այլ* **Պ***արս*ք *յստակագոյն եւս* []իսա և յետ նոցա Արաբացիք կո չէին ال سيسجان հշ Սիսև *ձան․ յորժէ անը*նա*կան և անյարիր է ածանցել՝ զ*])իւնեաց անուն - վասն որոյ Հաւանելի և ընդունելի եւս է ինձ միւս աւանդուԹիւն՝ այլոց պատմչաց, Սեւուկ անուն նահայ *պետ մի լինել, յորմէ և* Սեւորդեացն *ազգ, դրակի*ց Սիւնեաց. աստուստ թերեւս և անուն կղզւոյ ծովուն Գեղամայ՝ *Пեշան* , և *ի սմանէ* ՍիւՆիը՝ *իրը* Սեւուն*ի*ք¹ ։ Հարկ իսկ էր ստոյգ և նչանաւոր լինել Սեւկոյ նահա

մրար անը՝ բ սեսն արուաղե մ[]րաւո իղարար դրդրիք՝ ճ)՝ սչ ինէ նիր Ժեսն՝ ճան իռի բ մարուր Թեսվանեւմը՝ (մոհսվ ծ փահբև ղարար վահեանը, Հադահրք մ[հետոի,՝ նոա ճամղան ի դրդրչան դս լ՝ Թեբ ահգար ինբ մերչսր []․ Ժեսն, ի բնարակի արմ թմր<u> Ցառաջնում վերանորոգութեան ազգիս յետ աշխար</u> ՀակալուԹեան Մակեդով<u>ն</u>ացւոց՝ ի ձեռն ՊարԹեւա, զանց , նաՀապետն Սիսակեանց ոչ ժիայն կարգեցաւ կողմնակալ արեւելեան մասին Հայաստանեայց, այլ և ի նժին ցեղէ դտեալ ոմն «Առան՝ անուանի և քաջ, կաև » գեցաւ ի ՊարԹեւէն վաղարչակայ կողմնակալ բիւրա, » ւոր³»։ Այս անուն Առան քա**ջ ֆա**նսԹ է առ արեւելետն պատմիչս , և ի մերոցս՝ ի Մովսիսէ Կաղանկատացւոյ և այսը , որք այնու իմանան և նչանակեն զմիչագետս Ђրաս. խայ և Կուրի, յաւէտ զերկոսին աչխարհս Հայոց զԱրցախ և գՈւտի, այլ ընդարձակօրէն և ի վերայ արեւե. լեան մասին []իւնեաց ձգի, որում և ի ՀաՀ գայր լինել կողմնակալ բիւրաւոր, որպէս և էր]]իւնեացն նաՀապետ գլուխ արեւելեան գօրարանակին Հայոց, գրեաԹԷ Հա. մակ յիւրոյին այխարՀէն Հաւաքելով զմարտիկսն իրրեւ երկուս բիւրս արանց։ 11 թեպէտ և այսպէս կարդեալ ի Վաղարչակայ և յայլոց, չերեւի սերտ Հաղորդութիւն Սիւնեաց ընդ այլոց տոհմից Հայոց և ընդ պետականին, մինչեւ ցաւուրս ֆրդատալ. <mark>Նա և առ</mark> սովաւ իս/յ և յետոյ՝

արզազ անտանազբնունարբՐ տրուար Որշուրբանմ Ոիշրբան ւ

⁵ **Մ**ովսես **խ**որհեսայի, Բ. Ը։

յանախ առանձնութիւն իմն , կամ ապստամբութեամբ և ինընակացութեամբ, կամ միարանութեամբ ընդ այլոց դրացի ազանց , և առաւել միտելով և Հպատակելով տի րապետաց Ասիոյ , իմա Պարսից , ի ծանսԹագոյն ժամա, Նակս պատմութեան․ և այս ըստ Նախնոյն իւրեանց Միսակայ սեգ րարս ունելով , որով և կորովուԹիւն և քաջու Թիւն . զոր ոչ միայն լռելեայն յայտ առնէ պատմու. Թիւն , այլ և յայտնարան գրիչը ժեր . յորոց երիցագոյն Արթիւն՝ կոչէ իսկ գացանամիտ, վայրենագոյն, Հիշաղա բարոյ կողմանս զՍիւնեաց սահմանս, «և ի Նոցունց իսկ » ի վայրենեացն՝ եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւ » Նեաց կարգել, որոյ անուն կոչէր Անանիաս » ։ - Ոչ ինչ րնդՀատ յարանց՝ ժեծոգիք և վեՀազունք Հանդիսանան ի վեպո՝ և կանայք Սիւնետց, պեսպես չքնաղ և վսեմական կերպարանօք , առաւել քան յայլ աշխարհս Հայոց. զոր օրինակ, ճարտարարան այխարհածուհիքն Սահակիա և Բիւրեղ · *մուսայասարաս կուսանակ*ն Սահակադուխտ՝ արոր ժեծին **Ստեփանոսի Սիւնեցւոյ** . արըն Վահանայ Գող Թնեցող , կամ ո որ և իցէ երգական Չարմանալի չա. *րականինորին . Հրաչագեղն և Հրանժոյգ* Շահանդուխտ . վկայաչնորհն Շուշան՝ կին Այոտոյ որդւոյ Փիլիպպէի, որ չ**ջե**ց յոյժ արար յուղարկաւորուԹիւն առն իւրոյ, իսկ ինքն, աւա՛ղ, առաջինօրէն ժուժկալուԹեամը ժեռեալ րանտարգել ի Դունի՝ բացընկեցիկ լինէր․ — և պա տուաստն գուգեալ ի տէրն]]իւնեաց՝ []ոփիա, դուստր **Դերենկանն [[րծրու**նւոլ, այն որ գիտաց պատչանեցու_ ցանել ի կապիճ մատանւոյ Հրաչակերտից Վայոց ձորոյ՝ զակնն դերափայլ. — Մարիամ տիկին , դուսար Աշոտոյ , քաչան և ատանիրբան դայն. ը հգտուցին արժաղ ատա նիչ վեծին այն Ստեփանոսի քերդողի, սեւաչուք նչու. լիւեր **և իրերա**հառ տատուտրո<mark>եր, ոսո</mark>կուդը ագ է ՝ տատ և Հիացումն։

7. Առիթ իմն այսպիուոյ բնաւորութեան լինէր և եր կրին ընութիւն և դիրը , լեռնաչատ գոլով և ամուրս ապա_տ ստանի բնականս և ձեռագործս ընծայելով, ազատարա րոյութեան տածիչս, որը և մի ի նչանաւոր երեւութից են աչխարհին․ յոր սակս հին աչխարհագիրն յետ սակաւուց րերոց երկրին՝ կնքէ զբանն , « և աւնուր տեղիք » . նոյնպէս և սեփական պատմիչն (Օրպելեան) անդստին յետ ա Նուանց գաւառացն յաւելու. « [[ւնուրը անառիկը ի սմա, » որ ի մարդկան Հնարից Հեռացեալ են , բայց միայն ԹԷ » Տէր մատնեսցէ». դարձեալ, «Ամուրը գովելիը, անվախ » և անսասան ի Հնարից մարդկան »․ ապա Թուեալ յա. րուարբ ինևըւ ճոռը ը հսևո երևևո ՝ Ղաւրքաւ _՝ Թւ տՈ թւո » յոլովս, զորս աւելորդ համարեցաք գրել» ։ Եւ յետոյ այլ ուրեք վասն Բաղաց ԹագաւորուԹեան միայն՝ որ ի պատմչէն Սիւնեաց ի սկզբան անդ բանիցն և յիչեցեալբն յայլ և այլ գլուխս , և ի ցանկի գիւղորայից կամ յայլոց , այսո**ւ**քիկ են , այբուբենական կարգաւ , յորոց չատբ ծա " ւրջ արև բարև և արևաներութերություն և և և արտակաւ արջարժութ

Ազնաբերդ Աղընեոց բերդ Մնապատ բերդ

Մնդոկաբերդ Արփաբերդ Բաղաբերդ Բաղակայ ը․ կամ Քար Բաղակու Բարկուշատու ը• երևմ ԲերդաԹաղ Բերդաձոր (*գիւդ*) Բերդատակ գ. Բերդի գլուխ **Բերդիկ (** լ**Երնջակ**) Բերդիկ (ի Բարկուշատ) Բերդի մայր գ**․** Բղենոյ ը. Բոյորաբերդ Բորոտնոյ ը․ Բորտոյ բ․ Գեղաքունոյ ը․ Գեղի Գիլաբերդ Գրհամ Դայեկի քար Դղեակ **խ**ոսրովու? եոնաբառ Երնջակայ ը․ **Ե**օ**Թ**նաբերդ (*վիճակ*) **Մնջղակաբերդ**. լիզբերդ խոզաբերդ խոժոռաբերդ **)** թիծռանաքար կապան *որ է* Բաղաբերդ կապոյտ ը • կարճաւան <mark>կ</mark>աքաւաբերդ կամ կաքաւուց քար **Կ**վուաքար <mark>կամ Կըկոց քա</mark>ր Համբատայ ը -Հայրաբերդ Հրաշկաբերդ․ Հրասեկայ բ․ Ձագաբերդ. Ձագեծորոյ ը. **Ճա**նճի բ․ Մացրի Մեղըոյ ը . Նորբերդ (*ի Ճահուկ*) Նորբերդ (*ի* վ*ետի*) Շահապօնից ը . շամբ Շլորուա Որձաբերդ Որձաքար Որոտն Ուռաց – քար Պահու ը • Պաղաբերդ Պելեւ

...

Ատշեթամուց եւ Ձուն Ձախանճան Ճանսն ջսնսն եւ Ճանարտի եւ Ոսունդաերնսե Որորդան եւ Ասումանան եւ Պումանան

թի է նոյնը և եթ է օտարը յանծանօթից սոցին՝ ոչ գի, տեմ, լիչին արդ և Թուրբ անուամբ բերդորայքս․

Ագգալե (Սպիտակ ը․) Գզրլձա (Կարժիր) Կեավուր գալեսի Սագորդան գալեսի (Կաչաղակի կամ Միծեղի ը․) Քելի գալեսի (Ածուց ը․)։

րահրք ժամը ՝ նուս արչամում երուներաը բևկեկը , սետէո վորմ ընորակրдաճ - բ և մէտ էր ահիչ իդը աշխահչ լա ժանո շահաժատանաև շակտասւրճ կաչերը , սետէս ի բանգար, ուրբք ժահատատի Զավաւր Ժրմադոմ , սւս ահգար է անսաճահ այսե դաներուներար բ օտանացայ տիսրճ Ոսևջայը ՝ ջանբնիր ՝ Մենտիանիր ՝ բ տնը ։ Նտն հաղանբան կրչեւ, շարժայր տնեն չրժինը կաղ դրժին , սետ քանու երակչան իւնսն երև դ գերտիար ետևաստ շանն գանոր ՝ ժԺուժանս ՝ գահնար՝ բ ժանու գարսեր ւ հառատրրան գիտիր ուրբև սաշղարսեմ ենրաշխահշը շա հարնուս մեկնը, սևտէս կրևտժայրն համարս ՝ Որւրկճ, հարնուս մեկնը, սևտէս դրևտժայրն համարս ՝ Որւրկճ,

8. Երկոտասան գաւառս Սիւնեաց Համարին ամենայն պատմիչը ժեր և աչխարհագիրը, յորոց Հնագոյնն (Մ․ խորհն.) յարեւմտեան սաՀմանաց այխարՀին սկսանի Թուել և դասել. իսկ Որպելեանն՝ որ և գնորագոյն ա Նուանս իւրոյ ժամանակին ընդ վաղեժեացն զուգաւորէ, ի գլխաւորէն՝ այսինըն է յիչխանականէն (որ և ժէջեր, կրեայն է) սկիզբն արարեալ, այսպէս կարգաբանէ. «Գաւառս ունի երկոտասան. Առաջինն՝ որ ունի գրուն » գահ իչխանացն և հայրապետաց՝ Ծղղրեղ գաւառ, ա. » **ըսւարբա**ն *ի Ամիտ*ի ժառուտահրագի։ Ե. մանսջ շևև՝ » որ ի Հասարակական դիպուած ոց ողբոց և աչխարա<mark>ն</mark>աց՝ » կոչեցաւ Վայոց ձոր։ Գ. Գեղագորչը, որ *ի Հայկեա*ն » Գեղամայ կոչեցաւ Գեղարբունի։ Դ. Սըթեջ *դաւա*ռ, » որ սակս Հանապազորդեան բքոց և դառնաչունչ օդոցն՝ » կոչեցաւ Սոթեբ։ Ե. ԱՂԱՀԷՋ գաւառ, որ այժմ կոչի » Քոշոթող և խոժոթութելը։ Ձ․ Հոբոնը *գաւառ*։ Ի. » Բեւլա, գաւառ, որ այժմ կոչի Ա**ձ**էչ, որ ի Բաղակայ » *անուանեցաւ* ։ Ը • կովոսկա, *գաւառ* , *որ այժմ* ԳրՀստ » կոչեն։ Թ. Արերիդ գաւառ, որ այժմ կոչի Դևշջ**ծ**ն և » ՄԵՂՐԻ։ Ժ․ ՁՈՐՔ գաւառ , որ ունի զանմատոյց ամուրն » Բաղարերդ, և այժմ կոչի կողու ժԱ. Երեջոր գա. » ւառ և Գոլթъ։ ԺԲ. Ճոչորդ *գաւառ որ և* Չոբ**ն, որ** Քաչիկ և բարւռը զայս ծանուցանէ պատմիչն , այլ լաւ եւս էր վեզ աւանդել զայլոցն եւս փոփոխեալ անուանոն և տրոհմունս առանձնակ գաւառացն. զոր ոչ ունելով ճչդիւ գտակաւ՝ ոչ սակաւ տարակոյս է մեզ զսաՀմանաց ունանց նոցին իսկ երկուռասանեցուն Հին գաւառացն ։ Չէր իրչ ապանէր Վգուտևունիւր անեւան արուարո ուրբնր միոյ և նոյն գաւառի, որպէս Վայոց ձորոյ կոչել և ԵՂԵգերը ջոր, կամ նա և միոյ գաւառի բաժանիլ յերկուս ծանօթե մասունս, որպէս ՃաՀուկն և Շահապօկը, այլ չփոթումն ածեն միավ նոր անուամբ կոչիլ մասանց եր կուց գաւառաց, որով դժուարանամի և անկարողա**մի** ճչգրտել և զսահմանս Հնոց պատմական գաւառաց․ մաշ նաւանդ զի Հանդերձ Հնովքն այնոլիւք երկոտասանելումք՝ Նասաղրիւ չափ արուարճ **Րո**իր ժաւասան Ոիւրբան աս միջին և յետին գրիչս մեր։ Արդ որչափ ինչ Հաւաստի կամ Հաւանական երեւի մեզ, կարգեսցութ աստանօր, վինչչեւ վխեալ ի տեղագրութիւն վիոյ վիոյ ի նոցանէն, զի և կարեւոր իսկ է ի ծանօԹուԹիւն պատմական յիչա, տակաց աչխարհին ։

գաւառը, յորոց առաջինն Գեղդաներ՝ կոչի և ԳեՂԱՄԱՑ եւսեւ, *և նոա <mark>մասի</mark>ն* <mark>կն», և *յայլազդեաց*, </mark>Ոբզևբ․ — պարատափին, կոչի և ԱՐՏԻՑ ԳԱՒԱՌ, և երբեմն ընդ սաՀմանակից մասին Արցախոյ՝ Ծարած Երգեր։ Կից հա. րաւոյ ծովուն Գեղամայ՝ է գաւառն (Գ) վաջոց կամ ԵղեԳեռծ Ձոր, *զարդիս* Տարալաղըզ *ըստ այլազգեաց*․ յելից **ըսհա իա**ն (Ժ) **Ոմ**ՈՀԻՋՔ ՝ մահան դիձրամահ**բար** ա՞ Նուանս ծանոյց պատմիչ աչխարհին , իսկ զարդիս մասն *է* Զանկեազօր *գաւառի* ։ Ս*ոցին ի Հարաւոյ՝* (թ , *նա և* առային գաւառաց ըստ Օրպելեանի) ԾՂՈՒեՔ, որ վ ԵՐԻջոր կոչի ըստ հիւսիսային մասին, և Ալլեր ըստ հարա. *ւայնոյն , ըստ արդեաց* Պազարք Էնտ , *գէԹ ըստ մասի*ն։ *Զելից սորա Հարաւախառն (Ձ) Հ* **ըրբեր,** *որ մասամ***ր** կամ բոլորով կոչի և Քշջևլա, և մասն համարի Զան. կեաղօրի. Նոյն դարձեալ և ընդ Ծղկաց կոչի Սոսոսաև ի ժերոցս , աղաւաղմամբ |]իսական *ա*նուան , որպէս և բնդ Աղահէնոյ մասնակցեալ՝ միւս Քշջող կոչի։ ի հարաւոյ և *յելից Հարաւոյ սոցին կա*ն Է և Ը, Բ**ղ**Վ« և Ձոր«, *որոց* սաՀման դժուարորոշ է , թանզի և ի նախնումն Թուին մի գաւառ կամ վիճակ լինել Բաղաց թաքահին տոհմի , ապա տրոհետլ յերկուս, Բըղգ և Միհը Բըղգ կոչելով. պատ. միչն՝ գրուն Բաղս ասէ Ա**Հ**ԷՆ կամ ԱՀԱՆԱՆ կոչիլ, որ և Թուի արեւմտեան Հիւսիսային մասն երկրին․ իսկ Միւս Բաղջն՝ կոչի և Քևշորչիգ, այլ և ՄևՂևչջ, և *միանգա*_ *մայն ի յետնոց*՝ Բարկուշատ։ Ի*սկ Չոր*ք՝ *նոյն Համարի* ընդ արեւմտեան Էաղաց, զի մայրաքաղաք Թագաւորաց *Նորին էր* Բաղաբերդ , *յոր անուն եւս կոչի երկիր*ն , *որ* պես երրեմն և ԳեՂոեդոր. դարձեալ ի յետին ժամա, նակո երկոքին ևս Բադք և Չորը՝ յարակից սահմանոր. րոջն՝ կղզդ, կոչեցան ի տակս ամուր ամուր տեղեաց և

բերդին, և ռավկօրէն Ղափան, որով անուամբ ծանօ_֊ Թագոյն է ի յետին ժամանակու — ի Հարաւոյ Համօրէն Սիւնեաց առ Երասխաւ կայ (թ) գաւառն Արերենձ, տրոհեալ ի զանազան վիճակս, որիչ կամ խառն, ՄեՂՐԻ, Տոշջը, Մոջբե, կոռուաբերը։ — *Bելից նորին առ գե* տոմը է (Դ) Ոսմոնուն, որ ըսիրակես առ հրակը ակեր պես անուամբը կամ մասամբը կոչի, ոչ միայն ՎրՀևթ *ըստ պատմիլ*ն, *այլ և* Գելևբերդ, ՉևՎբեդներ, խորջոր, **կ** թչարչ. յետինս այս՝ ըստ ոմանց՝ ԹարգմանուԹիւն է || լրեւեաց անուան , իթրու կիշն-եիշզ , արեւադէմ նչա. Նակելով Թուրքարէն։ — || րեւմտեան գաւառք || իւնեաց առ եղերը Երասխալ, են (եռ) Հուլոեկ հանդերձ Շուլո ՊՈՒՆԵԱՑ Հորով, և (ԺԲ), Իրեջըկ, Ալրնճայ՝ ըստ այլադ գետց, որ ի քաջ Հնումն բովանդակիւր ի պարագրեայն իւր արդ (ֈգ) ի Գոզգա. ընդ սժին իրրեւ առանձին վի ճա*կը յիչին* Ագոելես, Որգոե**և**։ (*Օրտուպատ*), ՏԱՍ-ԴԻՆ, ՊԵլեհ, ՉԻՆԱՆԱԲ. *և Հոչակագոյն քան զբնաւս* Վ ԱՆԱՆԴ, խառն ի սոցունց մասանց, որոց՝ կրելով զա. **Նուա**նս վեծավեծ գիւղաւանից՝ յայտնի են և դիրը։ — ւառ, որ ի Հնումն և ըստ խորենացւոյ՝ ի վ ասպուրական Համարի էր. այլ անդատին ի ակզբանէ ը դարու Համա_֊ ր**եցա**ւ ընդ Սիւնիս , որպէս և պատչաճ ցուցաւ ի <mark>ըն</mark>ական գրիցն։ — Ձարդիս ընդ Ռուսաց տէրուԹեամբ՝ երկուց *հահանգաց նոցին բաժին է ալխարհս Սիւնեաց* , Երեւա_֊ Նեանն և Գանձակեան, *այսինքն է* Ելր**յ**դբեթորգօլոյ, առաքնումն վիճակեալ է պարատափն ||եւանալ ծովու՝ Նո<mark>Ր Պ</mark>ացեջից *և* Գահար *կոչեցեալ, և* Նախիջնիան. *եր*., կիսևմուդը, եսվարմակ դրանբան ղբց ը եսւը դառը Ոկւ՞ **հետց՝** Զրերերութը կոչմամբ։

Ոչ առ ընդարձակուԹեանն ինչ, Թէպէտ և կոչիցի ՄԵԾ ՍիիՆիգ յորոշումն ի ֆոբուէն, (որ է մասն մի Ար. ցախոյ և կողմե Ամարասայ), ունի այսքան յոլովուԹիւն գաւառաց, կամ մանաւանը մանրամասն բաժինս, այլ յաւ**էտ** վասն նախասացեալ բարուց ընակչացն՝ սիգու_֊ թեան և խրոխաման, որով թազումը գլուխ ամբարձհայ տիրանային գանագան կողմանց ինքնիչիանարար. բայց զօրէն այլոց աշխարհաց յաջողեաց և միոյ ի տերանցն (որ պես Թուի ընիկ Հայկազնոյն կամ լաւ եւս զարժին Առա. նայ) , նուաձել զայլսն ընդ ձեռամբ՝ ըստ տանուտիրական օրիՆաց , և պերձանալ բարձրագաՀուԹեամբ , նա և ի կարգի այլոу Նախարարաց և ազատաց Հայաստանեայց , և կոչել Սիշնեաց Տեր. այսպէս և յեկեղեցականին տեսչու *թեա*ն՝ վերամբառնայր եպիսկոպոս մի ****\\իւնեաց ի վերոյ այլոց գաւառական եպիսկոպոսաց։ ի ձաՀ գայ ասացե յոցս և բան չրչարերական ԹղԹոյ **Սարգսի Ս կաԹո**ղի, կոսի 1 ի սկզբան ՖԱ դարու (յամի 1006), յորում և զգաւառս Սիւնետց Թուէ և զթեմս եպիսկոպոսին, և ըզ Նախանաւան ի նոսին, ասելով . « Մյս իոկ են գաւառը » վիճակեալը Հօտի նոցա . Սիրչիգ , Բոլգ, Աբերես » ցոռչչ, Որդոռևց, Արգոռլոգ, Վևչ**և**չդ, ԵրչՋևկ, **Նև**֊ » ԻՋԱՎԱՆ , ՋՈՒՂԱՑ՝ *որջան Երասխայ գետն Հատանէ* , » ՃԱՀՈՒԿ , ՎԱՑՈՑ ԶՈՐ՝ խաչերոյ խոռ*ովև* , ԳեՂԱՔՈՒՆԻ՝ » կռզաբակ*ով*ը, Երբշաց, Ջաղացաջորը, և ֆորասը *իսկ* » թոլորովին , յորում բացում Հակառակութիւնը լեալ » էին, և մեծամեծ նզովիւբ ամրացուցեալ էին կաԹո₋ » ղիկոսքն Հայոց ։ Հատանէ և զսահման Աղուանից (ԻռւՐբի » խոռն , *Դեր գաւառ , Ա*լեչէջ՝ *ընդ որ Ավունոլ գետ*ն » *Հատանէ մինչեւ ի* Քարավազին *կամուրջ*ն , և Հ**ը**բ**ը**չդ » գաւաս. և յերն/ակայ սաՀմանին Բրջի ջոր, գոր Գող. » *Թնացիքն էին առնալ. նա և* վ ըչըչդ և Գողաթ, բոլո » րովին․ որոց Թէպէտ եպիսկոպոս լեալ էր և կայր սա**շ Bայսմ բանի բաց ի Կովսականէ յիչատակին աժենայն** Հին գաւառը լլիւնեաց, առաւելաւն Հանդերձ, Թէպէտ ոմանց անուանը լուելեայն կամ փոխանակուԹեամբ. որ պես, փոխանակ Ծղկաց՝ Սիւնիթ ասին, գի անդ էր ոս տան ||իւնեաց, Բաղջ՝ բովանդակեն և գՉորս, Ջաղա, ցաջուր ը այքե նրև Ժբմաճուրբան հյուբանե, յայա աս նեն զ∥ոԹս, որպէս և Ծար ի սաՀմանին Աղուանից, այս_∽ ինքն Արցախոյ։

9. Ծանուցաբ վերագոյն, զի Թէպէտ Հաւաստի է ըս կիզբն բնակութեան երկրին ||իւնեաց , մանաւանդ ի պարատափի ծովուն Սեւանայ , այլ ոչ և մեծի մասին աչ խարհին , և ոչ դէպը և անցը իրաց տևղւոյնջ , մինչ գրեա " Թէ ցվերջին դար Հարստուխեան || թյակունեաց․ որպէս զի յետ երկոցուն նախաՀարց ազգին (Սիսակայ և Առա. նայ), առա**ջին ՆաՀապետ՝ կամ Նախարար՝ յի**չի զկիսով <mark>Բ</mark> *դարու Գրիստոսի*, Բակուր *առ* Ա*Տիրանաւ* , գորոյ գ*Հար*մ չքն*աղա*քե*ղ՝ գ*՞նազինիկ *անուն՝ ի ժամու ընԹրեաց, մի ի կոչնականէն՝* Տրդատ *Բագրատունի՝ « յիւրն քար*_ » չեսոց ի բազմականն ․․․ և զրարձակիցոն ի բազմակա » ՆացՆ ի բաց պուղեաց․․․ և այնպէս յիւր վանսն եկեալ, » իսկոյն ի ձի ելեալ՝ Հանդերձ Հարձիւն ի Սպեր գնաց»։ — Ցետ դարու և կիսոյ՝ ի սկիզբն ԴԻ , ի ժամանակի լու_֊ սաւորուԹեան Հայաստանեայց, ընդ յուղարկեալոն ընդ տասանիցն դասի իշխանն Սիւնեաց՝ յլլգաԹանգեղո սէ , ըստ ժերս օրինակաց . այլ պատժիչն Աղուանից (Մով_ սէս Կաղանկատուացի) ասէ յիչեալ եշԹնեւտասն բարձս, և գլլիւնեացն՝ _{ԺԴ}ձ․ յայտ ուրեմն զի լրագոյն էր Հին օրի Նակ գրոցն․ ուր՝ երկրորդ անգամ ի կարգի երեքտասան իչխարտն Ասբրլոց աւմբիցան Ջևմտատի ը Ու Ժևիժաևի, յերթեն առ Կոստանղիանոս, թ դասի Սիւնեացն։ Սա ընդ ։ արիագոյնս ի նոցանէ նահատակեցաւ ի դարձին ի կե. ոարիոյ՝ ի պատերազմունս, ընդդէմ ֆրմացն Տարօնոյ և ասոչըսևեիը ըսձա Ոևցարան․ ը նմառանին, ան նմաս ին*խանին Հայտենից՝* խորճէսն *կոչեցելոյ, որ խրոխտայրն* ի վերայ իւր , « Հարեալ միճոմն զստղաւարտն՝ և կտրեալ » գնա ի զօրացն , փախստական արար ․․․ և Հանևալ Հան » դէպ իննակնեան վանուցն՝ մղեալ ընկէց յերիվարէն, » և իչեսոլ դանակաւ կտրեաց զգլուխ նորա⁴» ։ Նա ինգն և իրը առաջնորդ բանակին՝ յետ սպանման քրմապե տացն՝ Հնչեցոյց գփող պատերազմին ի խաղաղութիւն։

^{1 &}lt;u>Ոարփարսո Օհաքրքար՝ ԺՐ․ Ջ</u>բ։

³ Աառրաւսև Գինաատին մաշաստն արոնիր ի արմամեսուն բար,

⁵ Զույն երկրորդե և Օրպելեան յիւրն պատմունենան, Գլ. Թ։

կ Ջենոր Գլակ ի Պատմունետն Տարօնոյ։

Rhon ամաց ի դառնայն ի Հոովմայ և դայ ի նոյն տե դիս ի Կուառս, արքունի բանակաւն և Ս․ Գրիգորիւ, Հրամանաւ սորա կանգնեաց անդ իչխանն Սիւնեաց խաչ ւնեծ , որոյ առաքի զպաչտօնն մատուցին . ուրանօր ի գալ և յարձակել հիւսիսական հինիցն Գեդռեհոնի, Տրդատ արքայ յիչխանս այս Սիւնեաց տայր զաք խեւ բանակին իւրոլ, որով ենար դՀոնսն, և գթեւապետ ավոլ դնդի նու ցին ի մենամարտ կարդաց․ և զերիվարս միմեանց նախ սպանեալ՝ «երկռքեան զոյգ ի վայր անկան և բուռն Հա_֊ » րին զվիվեանց․․․ և ահապարեալ նստաւ (Սիւնեցին) » ի վերայ (այլոյ երիվարի), և դարձեալ՝ կտրեաց գգլուխ » նորա, ձգեալ ի մախաղն, և դարձաւ»։ Էւ ի վաղիւն ի միշտանդամ բաղխիլ բանակացն՝ ի նեղ անկեալ իչխա_ նին Ծուիաց՝ յոգնու*թիւն կարդայր զ*Սիւնին. «և նորա » Հասեալ իրրեւ զարագաԹռիչ արծուի՝ Հալածեա<mark>ց</mark> » զարմն ի նմանէ » ։ — Սա ինչն խնդրեալ էր ի Ս . Գրի. գորէ և ընկալեալ զոմն Ասորի վարդապետ և ուսուցիչ Ֆևիսասորիան օևիրում . ըրմ սևսլ « գրջաւ աւևախաւ» » Թեամբ եկն յաշխարհ իւր, և զաժենայն ընտանիս իւր » վիրտեաց աւազանին լուսաւորութեամբ, և կործանեաց » զաժենայն բագինս կռոցն․ և դարձոյց զաչխարՀն աժե » րայր ի ճևիսասրբութիւր » ։ Մատ ի ժան ղրգիր Ժևիժա՞ րի քարոզութեամբ անդր, «ընդ առաչելեալ մեծ նախ » արարն || իւնի, ըերեալ յաշխարհ և ի տուն իւթ, և » մեծածախ ընծայիւբ և արքունական պատարագօք պա_֊ » տուէ ընա . և չրջեցուցեալ ընդ գաւառան ավենայն » Հաստատէ ի Հաւատս . և ի պատչաճաւոր տեղիս չինէ » եկեղեցիս, և կանգնէ դնչանն տէրունի»․և յետոյ խըն դրեալ առաջնորդ ազգային , ընկալաւ ի ն**մ**անէ ի Վա₋ ղարչապատ ղֆրիգորիս ոմն աչակերտ նորին, «*լի* ամե » Նայն Հմտութեամբ, երիտասարդ Հասակաւ… տանել » վիճակեցուցանել յեպիսկսպոսութ իւն աչխարհիս Սիւ » Նեաց․ աստանօր սկիզբն եղեւ եպիսկոպոտուԹեանս » []իւնեաց․ որ և եկեալ մեծաւ ջանիւ Հաստատէր ի » Հաւատս ընորածին թրիստոնեայսն»։ Չիղջ է զի ոչ յիչեն պատվիչք վեր զանուն այսքանոյ քաջի և վեծաՀայ ւատ Նախարարի . այլ պատմիչ մի Վրաց յիչէ, ոչ գիտեմ գսա Թէ գայլ ոք ժամանակակից՝ օտարախորԹ իմև այ *նուամ*ը, **Պ**ԵլուՇավը? Ս*իւնեցի, առընԹերակայ գտեալ* փոխման արթոյ կուսին Նոշնեայ, յամի 332։

> 3 Ցայտ է իքե հրկաթետալիր տառիւր արհալ էր թերծ ի չին օրի... ծակին, դոր ոճե ՌՋ ընթերցհալ է, և ա՛յլ ոճե ՌՁ։

> » տելի է մարդոյ ի բերդն Հաւաթեալ, և զէն, օճառս և

տաղ դուստր Բակրոյ ապստամբ բդեշխին լլոձնեաց՝ սպանելոյն, և գտունն Աղձնեաց, և արար «գնա թթ. » դեայիւ , և պայա<mark>գատ</mark> տան նորա . ժառանգն **ըազմացաւ ,** » և Հանդերձ աշխարհաւն և աժենայն ուժոմն կայր **բը** » դեային Վաղինակ ի ծառայութեան արբային Հանա, » պազ ¹ » . ժինչեւ յետ ժամանակաց դարձաւ ժառանդու թիւնն ի խիշա օրդի Բակրոյ, գերծեայնի կոտորած է ազ. գատոհմին^ց։ - Վազինակայ որդի Թուի Մադովկ *իչխանն* ի ձևռնադրութիւն, և անուանի եղեւ ի բազում դէպս առ Արչակաւ Բ, պայազատեալ զվաղինակ՝ նա և յիչխա. նուԹեան ||լղձնեաց․ քանցի սաՀմանակցի նորին վեծի քաղաքին՝ Տիգրանակերտի, այն է _Ամդայ, **ք**աղաքապետ ասի լինել ի ժամանակի պաչարմանն ի ՇապՀոյ , և զդէմ ունել նորա զառաջինն՝ ոխերիմ Թյնամութեամբ. քանգի յորժամ մեծաւ եղեռնագործութեամբ էառ Արչակ ի կնութիւն զդուստր նորա զգեղանին ֆառանձեմ, դաշ ւաշարբեսվ ճայեր, մեմեշևսևերը իւև Ժրբե՛ և Դրատ Հա պուհ առ. ի ձգել զ Արչակ յիւր հաւատարմութ իւն՝ կա մեր զիշը դուսարն տալ նմա ի կնութիւն, ըստ **Բուզան**, դայ պատմութեան, կասկածեալ Հօրն ընդ անարգանո դոտեր իւրոյ Թագուհւոյ՝ խորամանկեալ և կայառեալ րազում ոսկւով զՀաւատարիմս երկոցուն թագաւորացն՝ ուծացոյց զնոսա ի միմեանց, և արկ ԹչնամուԹիւն և պատերազմ ի միջի նոցա , որով ոչ փոքր վտանդեցաւ աչխարհս Հայոց։ Բայց այլ պատժիչը (Աղուանից և Ծիւշ րբան) որ իդը առաջատո ռար ՖիրադաւՖբար Մրմաւ^ կայ (եթե նոյն նա իցէ), միանգամայն և նյանակ սէդ և խրոխտ բարուցն . զի ի նուաձել ՇապՀոյ զաշխարՀո վեր՝ յետ գերութեանն Արչակայ, քննեալ զկարգ բարձից Նախարարացն Հայոց, ըստ գրոց ԱգաԹանգեղեայ, Հրա. ղայետց Մրևսվիա՝ սշրբն ի խըչմոր, ե,ԳԺ ետզ․ «ր քա » Հպարտացեալ ոչ ինչ ճաչակեաց․ և զգացուցին Թա. » գաւորին վասն այնը․ ոչ ինչ փոյթ լինէր նմա»։ Եւ իրրեւ դէպ լինէր յայնմ ժամանակի՝ խազրաց արշաւել ի սակմանս Պարսից, և ՇապՀոյ գօրաժողով եղեալ յամե նայն ա**ղգաց** որ ընդ ձեռամբ իւրով, Հանդերձ իչխանզ**ջ**ն և գօրօբ Հայոց՝ խաղալ ընդդէմ նոցա, գրեաԹէ Թա փուր Թողլով գախ ոռանիստն իւր գՏիգրոն քաղաք , խոր Հուրդ քաջայանդուգն <mark>կամ</mark> յուսահատ վրիժու արկ ի <mark>վիտս</mark> իւր լլնդովկ, և Հատուածեալ յարքունի բանակէն « գօ. » րզըն իւրովը՝ Հազար ություն (կամ Հազար եօթնՀայ » րիւր³) արամելը, ժիր և, քաչագնաց երիվարօք Հասա » նէր ի Տիսբոն , և զզօրսն Թաթուցանէր արտա**ք**ոյ **ք**աղա_֊ » ֆին. (և ապա մուծեալ ի ներբս)… առին զգանձ ոսկոյ » և արծաԹոյ անՀամար , և գոՀարս ակտնց պատուակա_֊ » Նաց, և զաւարն բազմագին, և զոր ինչ բառնալն կա_ » րացին ի Թագաւորական տանէ և յաժենայն ժեծաժե₋ » ֆաց տանց՝ աւար առեալ յոյժ անրաւս . ժողովէ **զա**շ » ժենայն ի Բաղաբերդ, և զաժենայն դաւառացն իւր » դարմանս անասնոց այրել հրամայէր․ և զոր ինչ ու

¹ Բուզահալ, Գ. 📭 :

